ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԻՍՆՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնադրությունը կարգավորում է Բյուրեղավան համայնքի Ավագանու «Միասնություն» խմբակցության (այսուհետ՝ խմբակցություն) գործունեությունը, նրա մարմինների ղեկավարի, քարտուղարի, անդամների, իրավասությունների, լիազորությունների աշխատանքային ընթացակարգերը:

1.2 «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ավագանու կանոնակարգի III բաժնի համաձայն ստեղծվում է Բյուրեղավան համայնքի Ավագանու «Միասնություն» խմբակցությունը:

1.3 Խմբակցության գործունեությունը դադարում կամ վերականգնվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդված 1-ին մասի, 66-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ավագանու կանոնակարգի III բաժնի 13-րդ մասի 89-րդ կետի համաձայն:

1.4 Բյուրեղավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 2022 թվականի սեպտեմբերի 25-ի ընտրությունների արդյունքների համաձայն «Միասնություն» կուսակցության առաջադրմամբ ընտրված Ավագանու անդամները ընդունում են Բյուրեղավան համայնքի Ավագանու «Միասնություն» խմբակցության կանոնադրությունը:

1.5 Խմբակցությունը գործում է ՀՀ Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ավագանու կանոնակարգի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության համաձայն:

1.6 Խմբակցության գործնեությունը հիմնվում է բազմակարծության հարցերի ազատ քննարկման և կոլեգյալ որոշումների կայացման հիման վրա:

1.7 խմբակցության անվանումն է «Միասնություն»:

1.8 Խմբակցության գտնվելու վայրի հասցեն է ք. Բյուրեղավան, Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք:

1.9 Խմբակցության անդամները կոչված են ապահովելու սույն կանոնադրության պահանջները:

2 . ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Իրականացնել «Միասնություն» խմբակցության կողմից ընդունված Բյուրեղավան համայնքի մասին նախընտրական ծրագրում ամրագրված սկզբունքների և ուղենիշերին համապատասխան ծրագրային լուծումների կյանքի կոչման ուղված գործունեություն:

2.2 Բյուրեղավան համայնքի և նրա բնակիչների առջև ծառացած բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացնել իր լիազորությունները և պարտականությունները:

2.3 Համախմբել «Միասնություն» խմբակցության ավագանու անդամներին հանդես գալ որպես կազմակերպված խմբակցություն:

2.4 Օժանդակել և աջակցել խմբակցության ավագանու անդամների կողմից ներկայացվող նախագծերի և ծրագրերի իրականացմանը:

2.5 Պաշտպանել Բյուրեղավան համայնքի շահերը և նրա բնակիչների իրավունքները:

2.6 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով զանգվածային լրատվության միջոցներով տեղեկատվություն տարածել իր գործնեության վերաբերյալ:

2.7 Իր նպատակների, խնդիրների իրականացման համար համագործակցել բոլոր շահագրգիռ անձանց հետ:

2.8 Իր գործնեությամբ նպաստել Բյուրեղավան համայնքի համաչափ զարգացմանը:

2.9 ՀՀ օրենսդրության համաձայն իր կողմից կատարված աշխատանքների միջոցով աջակցել Բյուրեղավան համայնքի ավագանու գործնեությանը:

3.ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.3 Խմբակցությունը իր նպատակներին և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգի և սույն կանոնադրությամբ սահմանված իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝

ա) իր աշխատանքները կազմակերպում է նիստերի, խորհրդակցությունների հանդիպումների միջոցով,

բ) որոշում է ընդունում ավագանու հանձնաժողովներում խմբակցության անդամների մասնակցության վերաբերյալ,

գ) ավագանու իրավական ակտերի և դրանց ընդունման սահմանված ընթացակարգի համաձայն ներկայացնում է խմբակցության անդամների նախաձեռնությունները և առաջարկությունները,

դ) քննարկում և որոշում է ընդունում քննող հանձնաժողով ստեղծելու մասին,

ե) քննարկում և որոշում է ընդունում ավագանու նիստերին հրավիրել քննարկվող հարցի վերաբերյալ տեղեկացված այլ անձանց ելույթ ունենալու հարցերին պատասխանելու համար,

զ) ամփոփում և որոշում է ընդունում խմբակցության գործնեության կատարված աշխատանքների վերաբերյալ,

է) հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով անց է կացնում քննարկումներ և հստակեցնում խմբակցության դիրքորոշումը քննարկվող հարցի վերաբերյալ,

ը) Բյուրեղավան համայնքի բնակիչների հետ կազմակերպում է հանրային հանդիպումներ, քննարկումներ բարձրացված հարցերին տալիս սպառիչ պատասխան,

թ) Բյուրեղավան համայնքի բնակիչների կողմից բարձրացրած խնդրների և առաջարկությունների վերաբերյալ բարձրաձայնում է Ավագանու նիստերում և հետամուտ լինում խնդիրների լուծմանը,

ժ) սահմանված ժամկետում անցկացնում է քննարկումներ, կատարում ուսումնասիրություններ բյուջեի նախագծի վերաբերյալ,

ժա) քննարկում է բյուջեի եռամսյակային կատարման ընթացքը և տարեկան հաշվետվությունը,

ժբ) խմբակցությունը կարող է դիմել ՀՀ վարչական դատարան ավագանու և քաղաքապետի ակտերի իրավաչափությունը վիճարկելու հարցով,

ժգ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ավագանու կանոնակարգով և սույն կանոնադրությամբ չարգելված այլ գործառույթներ:

4. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐԸ

4.1 Խմբակցության հերթական նիստերը հրավիրվում են ավագանու նստաշրջանների ընթացքում ամիսը առնվազն մեկ անգամ խմբակցության ղեկավարի կողմից:

4.2 Խմբակցության ղեկավարի կամ անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ կարող են հրավիրվել նաև արտահերթ խմբակցության նիստեր:

4.3 Խմբակցության նիստերը կարող են հրավիրվել նաև նստաշրջաններից դուրս սույն կանոնադրությամբ սահմանված ընթացկարգով:

4.4 Խմբակցության ղեկավարը նիստից առնվազն երկու օր առաջ խմբակցության ադամներին տեղեկացնում է նիստի անցկացման օրվա, ժամի և տեղի մասին նրանց տրամադրելով օրակարգը և դրան առնչվող փաստաթղթերը, եթե այդպիսիք կան:

4.5 Նիստը վարում է խմբակցության ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում խմբակցության քարտուղարը:

4.6 Խմբակցության ղեկավարի և քարտուղարի բացակայության դեպքում նիստը վարում է խմբակցության տարիքով ավագ անդամը:

4.7 Խմբակցության նիստում կարող է քննարկվել Բյուրեղավան համայնքի ավագանու իրավասություններին, գործնեությանը, լիազորություններին վերաբերող ցանկացած հարց:

4.8 Խմբակցության նիստը իրավազոր է եթե նիստին մասնակցում են խմբակցության ավագանու անդամների կեսից ավելին:

4.9 Խմբակցության նիստի օրակարգում ընդգրկված հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

ա) օրակարգի հաստատում,

բ) զեկուցողի ելույթ,

գ) հարցեր զեկուցողին,

գ) մտքերի փոխանակություն,

դ) քվեարկություն:

4.10 Նիստում յուրաքնչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է տվյալ հարցի քննարկման ավարտից անմիջապես հետո:

4.11 Խմբակցության անդամը կարող է հրաժարվել քվեարկությանը մասնակցելուց:

4.11 Խմբակցության նիստում որոշումներն ընդունվում են, եթե դրանց կողմ են քվիարկել Նիստին ներկա խմբակցության անդամների կեսից ավելին:

4.12 Խմբակցության նիստում քվիարկության արդյունքում ձայների հավասար բաշխվելու դեպքում վճռորոշ է նիստը վարողի դիրքորոշումը:

4.13 Նիստի արձանագրությունը, որը ներառում է խմբակցության նիստում քննարկված բոլոր հարցերի քվեարկությունների անվանական արդյունքները, ստորագրում է նիստը վարողը:

4.14 խմբակցության նիստերին կարող են մասնակցել քննարկման ենթակա հարցերին իրազեկ անձինք ինչպես նաև մասնագետներ:

4.15 Խմբակցության նիստերին մասնակցում է խմբակցության գործավարը:

5.ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1 Խմբակցության ավագանու անդամները ընտրում են խմբակցության ղեկավար և քարտուղար:

5.2 Խմբակցության ղեկավարը՝

ա) ղեկավարում է խմբակցության գործնեությունը,

բ) գումարում է խմբակցության արտահերթ նիստ,

գ) նախապատրաստում եւ վարում է խմբակցության նիստերը,

դ) կազմում և խմբակցության անդամների հաստատման է ներկայացնում խմբակցության նիստի օրակարգը,

ե) համակարգում է խմբակցության աշխատանքային խմբերի աշխատանքը,

զ) ստորագրում է խմբակցության որոշումները հայտարարությունները, ինչպես նաև խմբակցության անունից կազմվող բոլոր գրություններն ու փաստաթղթերը,

է) վարում է խմբակցության աշխատանքային խորհրդակցությունները կազմակերպում է խմբակցության ընթացիկ աշխատանքային գործնեությունը,

ը) ներկայացնում է խմբակցության դիրքորոշումը ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,

թ) վերահսկում է խմբակցության որոշումների և հանձնարարականների կատարման ընթացքը,

ժ) խմբակցության անունից վարում է բանակցություններ, արտահայտում խմբակցության դիրքորոշումներն ու տեսակետները,

ժա) խմբակցության անունով ստացված դիմումների, բողոքների, առաջարկությունների վերաբերյալ համապատասխան ընթացք է տալիս և պատասխանում խմբակցության անունից,

ժբ) ապահովում է խմբակցության որոշումների կատարումը,

ժգ) ներկայացնում է խմբակցությունը պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների, Բյուրեղավան համայնքի ավագանու խմբակցությունների, զանգվածային լրատվության միջոցների, խմբակցության գործունեության հետ առնչվող այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում,

ժդ) խմբակցության որոշումների իրականացման համար պարտադիր ցուցումներ է տալիս խմբակցության անդամներին,

ժե) իր երաշխավորություն է տալիս համապատասխան մարմնին և ներկայացնում խմբակցության գործավարին, ով ընդունվում են աշխատանքի ժամկետային պայմանագրով,

ժզ) համակարգում է խմբակցության գործավարի աշխատանքները, վերջինիս տալիս է համապատասխան հանձնարարականներ,

ժէ) իր հանձնարարությամբ գործավարը աջակցում է խմբակցության ավագանու անդամների աշխատանքներին,

ժը) խմբակցության նիստին հարցերի քննարկումներին մասնակցելու համար կարող է հրավիրել տվյալ քննարկվող հարցին իրազեկ անձանց ինչպես նաև մասնագետների,

ժթ) խմբակցության անդամներին իրազեկում է որոշումների կատարման ընթացքի մասին,

ժժ) ընդունում է խմբակցությունից դուրս գալու խմբակցության անդամի գրավոր դիմումը և սահմանված կարգով ներկայացնում համայնքի ղեկավարին,

ի) նախապատրաստում և ավագանու քննարկման է ներկայացնում հարցեր, որոշումների և ուղերձների նախագծեր,

իա) Բյուրեղավան համայնքի ավագանու նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ հայտնում խմբակցության դիրքորոշումը,

իբ) բյուջեի նախագծի վերաբերյալ խմբակցության դիտողությունները և առաջարկությունները գրավոր ներկայացնում է Բյուրեղավան համայնքի ղեկավարին,

իգ) լիազորում է ավագանու անդամներին հանդես գալու խմբակցության անունից:

5.3 Խմբակցության քարտուղարը՝

ա) խմբակցության ղեկավարի բացակայության դեպքում իրականացնում է ղեկավարի գործառույթները կամ վերջինիս լիազորմամբ կատարում է նրա լիազորությունները,

բ) մասնակցում է խմբակցության հերթական նիստի օրակարգի նախագծի մշակման աշխատանքներին,

գ) ապահովում է խմբակցության անդամներին անհրաժեշտ նախագծերով ու փաստաթղթերով,

դ) կազմակերպում է խմբակցությունում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը:

6.ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ

6.1 Խմբակցության անդամն իրավունք ունի՝

ա) ընտրել և ընտրվել խմբակցության ղեկավար կամ քարտուղար,

բ) խմբակցության և նրա ղեկավարին ներկայացնել նախագծեր, առաջարկություններ և նախաձեռնություններ,

գ) իր քվեարկությամբ մասնակցել խմբակցության որոշումների ընդունմանը,

դ) խմբակցության նիստում քննարկվող հարցի վերաբերյալ հարցեր տալու, առաջարկություններով և նախաձեռնություններով հանդես գալու, ելույթ ունենալու, իր դիրքորոշումը հայտնելու,

ե) խմբակցության ղեկավարից սպառիչ տեղեկատվություն ստանալու խմբակցության գործունեության մասին,

զ) խմբակցության կողմից ընդունված որոշումով անդամակցել ավագանու հանձնաժողովներին,

է) խմբակցության և նրա ղեկավարի որոշմամբ խմբակցության անունից արտահայտել դիրքորոշումներ, տալ հարցազրույցներ, վարել բանակցություններ, արտահայտել իր անձնական տեսակետը՝ հատուկ նշելով այդ մասին,

ը) խմբակցության ղեկավարի հետ համաձայնացնելով՝ խմբակցություն հրավիրել տվյալ քնարկվող հարցին իրազեկ անձանց ինչպես նաև մասնագետների,

թ) մասնակցել խմբակցության կողմից կազմակերպված միջոցառումներին,

ժ) իր գրավոր դիմումի համաձայն դուրս գալ խմբակցությունից և այդ հիմքով դադարեցնել իր անդամությունը խմբակցությունում,

ժա) ՀՀ օրենսդրությամբ, Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգով, իրավական ակտերով սահմանված և սույն կանոնադրությամբ իրականացնել այլ իրավասություններ:

7.ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ

7.1 Խմբակցության անդամը պարտավոր է՝

ա) մասնակցել խմբակցության և Բյուրեղավան համայնքի ավագանու նիստերին,

բ) մասնակցել խմբակցության նախաձեռնած աշխատանքների իրականացմանը,

գ) իր բացակայության դեպքում նախապես տեղեկացնել խմբակցության ղեկավարին կամ քարտուղարին՝ նշելով մասնակցության անհնարիության մասին,

դ)կատարել խմբակցության ընդունված որոշումները և տրված աշխատանքային հանձնարարականները,

ե) ակտիվ մասնակցել խմբակցության կանոնադրության նպատակների և խնդիրների իրականացմանը,

զ)իր գործունեությամբ ու վարքով բարձր պահել խմբակցության հեղինակությունը,

է) առանց խմբակցության և նրա ղեկավարի կողմից տրված լիազորության հանդես չգալ խմբակցության անունից,

ը) բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները,

թ)պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, համայնքի ընտրողներին տեղեկացնել խմբակցության և Բյուրեղավան համայնքի ավագանու աշխատանքների մասին,

ժ)ուսումնասիրել քաղաքացիներից ստացված առաջարկությունները եւ պատասխանել դիմումներին.

ժ) իրականացնել ՀՀ օրենքներով և Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

8.ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

8.1 Խմբակցության անդամի լիազորությունները կարող են դադարեցվել , եթե՝

ա) նա իր դիմումի համաձայն դուրս է եկել խմբակցությունից,

բ) չի հետևել խմբակցության կանոնադրության պահանջներին կամ պարբերաբար ակնհայտ չի կատարել նիստերի որոշումները,

գ) անհարգելի բացակայել է խմբակցության և Բյուրեղավան համայնքի ավագանու նիստերից,

դ) ավարտվել է Բյուրեղավան համայնքի ավագանու լիազորությունների ժամկետը,

ե) նա կորցրել է Բյուրեղավան համայնքի ավագանու ընտրական իրավունքը,

զ) նա դատապարտվել է ազատազրկման,

է) օրինական ուժի մեջ է մտել նրան անգործունակ ճանաչելու մասին դատարանի որոշումը,

ը) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով նա անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել,

թ) նա մահացել է,

ժ) ՀՀ Օրենսդրության, Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգի և սույն կանոնադրության համաձայն:

9.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Սույն կանոնադրությունում լրացումներ փոփոխություններ կարող են կատարվել խմբակցության անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

9.2 Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: